

Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլ – 2022թ.

9-րդ դասարան

Պատասխաններ

1. համբերություն, ներշնչանք, հոգի
2. վաճառաշահ– աշխույժ, շահավետ առևտուր ունեցող, նաև՝ առևտրով շահ վաստակող կթղա – գավաթ, բաժակ
դիպակ–ոսկեթել և արծաթաթել նախշագարդ գործվածք՝ կտոր սկուտեղ– մատուցարան, բոլորաձև խոր աման ուտելիք մատուցելու համար
ակնապարար– ակնահաճո, աչք շոյող, աչքի համար հաճելի, դուրեկան,
եթերահյուս–նուրբ, անուրբ, եթերից հյուսված
անքթիթ– ակնդետ, ակնապիշ, ուշադիր
սրդողել– բարկանալ, զայրանալ, նեղանալ
անաչառ–անարդար, անարդարամիտ, անկողմնակալ
ակնկոր– աչքերը խոնարհած, ամոթահար
3. **աճանցավոր** - վերադարձ, գերազանց, ապիկար, ընդոստ, տրամադիր, առաջնորդ, ապուշ, օրենք, շաղկապ, ընդունակ:
4. **հոգի տալ** 1.անսահմանորեն նվիրված լինել մի բանի, սիրով, նվիրվածությամբ մի բան անել, 2.պատրաստ լինել կյանքը տալու մի բանի, 3. սաստիկ ցանկանալ, փափագել մի բան
5. սահմանական եղանակ, անկատար ներկա, անկատար անցյալ, անցյալ կատարյալ
6. ...բրուտ կար, որի մատները հասարակ կավը դարձնում էին... – որոշիչ
Նրանց դիպչելիս թվում էր՝ կավը երգում է՝ մեղմաձայն դողանջելով: –ենթակա
Մի օր էլ, երբ վարպետը դարձյալ դժգոհ մնաց, տղան... – ժամանակի պարագա
... չհասկացար, որ կատարելության հասնելու համար ... – ուղիղ խնդիր
7. Մի օր էլ՝ վարպետի՝ սափորները դարձյալ չհավանելուց հետո, տղան...
8. **բարդ ստորադասական**
Նրանց դիպչելիս թվում էր՝ կավը երգում է մեղմաձայն: -
Համոզված էր՝ ուսուցիչն անաչառ չէ իր հանդեպ:
... չհասկացար՝ աշխատանքում կատարելության հասնելու համար...
- բարդ համադասական**
... հետևում էր ուսուցչին, ամեն կերպ փորձում նմանվել նրան:
...ափսոսանքով տարուբերում էր գլուխը. այն չէ:

9. համբերելով կամաց-կամաց կարող ես հասնել նպատակիդ

Գնահատման չափանիշներ

- Հարց 2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Հարց 5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
Հարց 6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան (փոխակերպում և կետադրություն) գնահատվում է 1 միավոր:
Հարց 8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
Հարց 9. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

Ուշադրություն: Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: